ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	«Տեքսուորլդ» ՍՊԸ	«Տեքսուորլդ» ՍՊԸ	Տեքսուորլդ	«Տեքսուորլդ» ՍՊԸ	Աշխատանքային համազգեստի լրակազմը (36-60 չափսի՝ համապատասխանի պատվիրատուի կողմից ներկայացված չափման աղյուսակների) բաղկացած է աշխատանքային բաճկոնից (թվով 1 հատ), տաբատից (թվով 2 հատ), կեպիից (թվով 1 հատ), կարճաթև շապիկից (թվով 2 հատ): Ամառային բաճկոնը, տաբատները և կեպին պետք է կարվեն պոլիեսթերաբամբակային կտորից: Կտորը պետք է ունենա յուղաջրակայուն (MBO) և 50% կոնցենտրատով թթվային հիմքերից

					(защита от кислот концетрацие 50% - K50) պաշտպանիչ հատկություն: Կտորի բաղադրությունը 35% բամբակ, 65% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245±5 գ/մ2: Կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 1,100Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 800Ն, կտորի յուղակայունությունը / յուղանդրադարձման ցուցանիշը նախնական տեսքում պետք է կազմի 5 բալ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոխվի: Կտորի թթվակայունության ցուցանիշը նախնական տեսքում պետք է կազմի 6 ժամ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոխվի: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -2%, ըստ միջնաթելի - 1.5%: Հագուստի գունային համադրությունը՝ կանաչ գույնը (գույնի կոդը 19-6026TPX) համադրված դեղին գույնի հետ (գույնի կոդը 13-0759 TPX): Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով է:

						Առաջամասը մշակվում է ձևավոր, մի քանի կտորանի կոկետկայով։ Հիմնական գույնը կանաչն է։ Բաճկոնի բոլոր միացման կարերը մշակված են 5 թելանի մեքենայով։ Թևատեղերը և ուսի կարերը մշակվում են զույգ կարերով։ Կոկետկայի եզրերը մշակվում են կանտով, որը մշակվում է հատուկ թելով (3մմ)։ Կանտից վերև տեղադրվում են 3սմ լայնությամբ լուսանդրաղարձնող ժապավեններ։ Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլիէսթեր է Լուսաևդրադարձնող ժապավենների լուսանդրադարձման գործակիցը 60°Cջ երմաստիճանով 40 ցիկլ լինելուց հետո չպետք է պակաս լինի նախնական լուսանզրադարձման գործակցի 90%-ից։ Մեջքի ամբողջ երկայնքով ուսից 10-11սմ ներքև տեղադրված է լուսանդրադարձնոդ ժապավեն։ Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով է։ Օձիքի վրա պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով։ Թևքերը՝ ներկարված են, դաստակի հատվածում 4 սմ լայնությամբ մանժետով, որը կոճկվում է մեկ

						օղակ կոճակով: Մանժետի եզրից 18սմ վերև տեղադրված է լուսանդրադարձնող ժապավեն: Բաճկոնը կոճկվում է սև գույնի 22 մմ տրամագծով կոճակներով (7կոճակ): Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է երկու վրադիր գրպան: Գրպանների մուտքի ձևածքը շեղ է, մուտքի հատվածը մշակված է 3սմ լայնությամբ երիզներով: Կողային վրադիր գրպանների մուտքը 18 սմ լայնությամբ է: Երիզի տակ տեղադրված է թելով մշակված 3մմ լայնությամբ դեղին կանտ: Բոլոր գրպանների գարդակարերր արված են զույգ կարով: Կրծրավանդակի աջ հատվածում տեղադրված է վրադիր գրպան, որը փակվում է դեղին գույնի կափույրով: Գրպանը փակվում է կպչունային փականով: Կրծրավանդակի ձախ հատվածում տեղադրված է մեկ վրադիր գրպան: Գրպանի ձախ անկյունային հատվածում մշակված է գրիչի տեղադրման հատված: Գրպանի վրա տեղադրված է և.ս մեկ փոքր ծավալային գրպան: Այդ երկու գրպանները փակվում են ձևավոր

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՀՍՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					
					կափույրով: Բոլոր գրպանների մուտքերը ունեն 1սմ երկարությամբ հատուկ ամրակարեր: Բաճկոնի փեշը մշակված է 4սմ լայնությամբ մանժետով: Կողային հատվածներում տեղադրված են 3–4սմ լանությամբ էլաստիկ ժապավեններ: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է ընկերության անվանումը կամ անվանման հապավումը, կրծքավանդակի ձախակողմյան գրպանի վրա վրադիր կտորի վրա ասեղնագործվում է Երևանի քաղաքապետարանի տարբերանշանը՝ պատկերների համաչափության պահպանմամբ: Տաբատը ուղիղ ձևվածքի է: Հիմնական գույնը կանաչն է: Տաբատն առջևից ունի 2 կողային գրպաններ, հետնամասում երկու վրադիր գրպան և մեկ գրպան հետնամասում ծնկից վերև: Հետնամասի գրպանը ծնկից վերև նախատեղված է աշխատանքային գործիքներ դնելու համար: Կողային վրադիր գրպանների մուտքի ձևածքը շեղ է, մուտքի հատվածը

					մշակված է նեղ երիզով և կանտով: Բոլոր գրպանների մուտքերն ունեն 1սմ երկարությամբ և 2մմ լայնությամբ ամրակարեր: Տաբատի կողային և գրպանի կարերը կարված են զույգ կարերով: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կա 6 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և 22մմ տրամագծով կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավոևրելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 3 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ, Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսատանդրադարձման գործակիցը 60°C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի նախնական լուսանդրադարձման գործակցի 90%-ից: Կեպին (կամ պանամա տեսակի գլխարկ՝ ըստ

						պատվիրատուի հետ նախապես պայմանավորված քանակների) կարվում է կանաչ գույնի կտորից, ներսի մասում ինքնասսոսնձվող ոչ գործվածքային կտորից, ուժեղացված գլխարկահովհարով, դիմային հատվածում ասեղնագործման կամ դաջման եղակակով տեղադրվում է ընկերության բազմագույն տարբերանշանը: Շապիկը կարված է 160±5% գ/մ2 մակերեսային խտությամբ բարձրորակ պենյա կոմպակտ կտորից, Գործվածքի բաղադրությունը 95% բամբակ, 5% էլաստոն: Շապիկը կարճաթև է, վզի կլոր բացվածքով, կլոր օձիքը բարձրորակ պենյա Ռիբանա կտորե գործվածքից: Գծային չափերի փոփոխությունը լվանալուց հետո չպետք է գերազանցի 2%: Կտորի հիմնական գույնը վառ կանաչ (գույնի կոդը #66ff00), պարտադիր պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելով: Թելը, որից կարվելու են շապիկները 100 % բամբակյա բարձր որակի: Շապիկի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է

					ընկերության անվանումը կամ անվանման հապավումը, կրծքավանդակի ձախակողմյան հատվածում՝ ասեղնագործման կամ դաջման եղակակով տեղադրվում է ընկերության բազմագույն տարբերանշանը: Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը կատարվում է թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով: Յուրաքանչյուր 2 շապիկ դրվում է մեկ տոպրակի մեջ: Տոպրակները պիտակավորված են, որոնց վրա նշված է տեսականու չափսը, անվանումը, քանակը: Կարճաճիտք պաշտպանիչ կոշիկը նախատեսված աշխատակիցների անվտանգության ապահովման համար: Կոշիկը պետք է համապատասխանի EN 20345 ստնդարտի պահանջներին՝ S3 պաշտպանողականության աստիճանով: Կոշիկը բաղկացած է առաջամասից, ճտքերի ստորին հատվածից, ճտքերի վերին հատվածից, լեզվակից, տակացուից: Կոշիկի առաջամասը, ճտքերի ստորին հատվածները պետք է

						կարված լինեն 1.9 – 2.1 մմ հաստությամբ սև գույնի բնական հարթ / առանց նակատի/ կաշվից: Ճտքերի վերին մասը և լեզվակը պետք է կարված լինի սև գույնի բնական կաշվից կամ բարձրորակ կաշվե փոխարինիչից: Ճտքի վերին եզրի կաշվե հատվածի ներսի կողմից պետք է տեղադրված լինի սպունգե ներդիր: Կոշիկի լեզվակը մշակվում է լրացուցիչ փակ կափույրներով՝ նախատեսված կեղտի ներթափանցումն կանխարգելելու համար: Կոշիկի առաջամասը միանում է ճտքի ստորին հատվածին յուաքանչյուր կողմից չորս զույգ կարերով, իսկ ճտքի ստորին մասը ետնամասին զույգ կարերով: Կոշիկի ետևամասի կարի վերին եզրով լրացուիչ մշակված է բարակ լուսանդրադարձնող ժապավենով: Կոշիկի ընդհանուր բարձրությունը ամենաբարձր կետում պետք է կազմի 10-10.5 սմ, իսկ ճտքի բարձրությունն ետևամասի հատվածից պետք է կազմի 6.5 սմ: Ճտքերին առկա են 4 շարք մետաղական արագաքուղ

						կեռիկներ, կապումը՝ կոշկաքուղերով: Կոշիկի տակացուն պետք է պատրաստված լինի երկշերտ պոլիուրետանից՝ ընդ որում տակացուի վերին շերտը պետք է լինի սև գույնի, իսկ ստորին շերտը մոխրագույն գույնի: Կոշիկի տակացուի միացման եղանակը՝ պոլիուրետանի ուղիղ սրսկում - PU Injection method, որը դարձնում է տակացուն զագատովկայի հետ մեկ ամբողջություն: Կոշիկի տակացուի հատուկ մշակման արդյունքում տակացուն մասամբ բարձրանում է մինչ առաջամաս՝ ծածկելով առաջամասի քթային հատվածը՝ ստեղծելով լրացուցիչ պաշտպանություն դիմային հարվածներից: Կոշիկը պետք է ունենա մետաղական քթամաս՝ նախատեսված ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից պաշտպանելու համար, և մետաղական ճկվող ներդիր՝ նախատեսված ոտքի թաթերը սուր, կտրող իրերից պաշտպանելու համար: Կոշիկի ներսի հատվածում տեղադրված է բաց մոխրագույն ծակոտկեն գործվածք: Կոշիկները

					պետք է արտադրված լինեն 2025թ-ից ոչ շուտ: Կոշիկի լեզվակի արտաքին հատվածի վրա կարվում է սև գույնի արհեստական թավշյա կտոր, որի վրա տպվում է ՀՈԱԿ-ի անվանման հապավումը: Փաթեթվորումը՝ յուրաքանչյուր զույգ կոշիկ դրվում է անհատական տուփի մեջ: Չափսերը և քանակները նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված: Ապրանքի մատակարարումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը իր հաշվին: